

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տոն օրերէից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ 1901 ԹԻԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(29-ՐԴ ՏԱՐԻ)

ԴՐԱՅԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿՐԻ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

Ա. մ. հ. օր բացի տօն օրերէն յաջորդող օրերէն.

ԲԱՑՎԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ. «Մշակ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն եւ մէկ եւ տասն
ամսականը՝ 9 ռ., ինն եւ ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ
ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. եւ մի
ամսականը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱՑՎԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ա. մ. հ. ի կայ ը բաժանորդները պէտք է
վճարեն տարեկան 7 ռուբլի. Եւ օ. պ. ի կայ ը բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պ. ար. օ. պ. ի կայ ը
բաժանորդները 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՐԱՏԱՐԱՍԱՀՄԱՆԸ (Բաղարնայա եւ Բարձրակայա փողոցների
անկիւնը):

Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, եւ առհասարակ նամակ-
ներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция
«МШАКЪ», իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լիզուներով:

Ա. Պ. Ա. Ռ. Ի. Կ. ԲԱՑՎԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԷ ԸՆԴՈՒՆՎՈՒ

ԲՈՎԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Օգնութեան կարօտ են.—ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Մամուլ. Հայոց ներկայացումները Բագ-
ու. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՄԵՆԱԼՈՐ մարդը.

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿԱՐՕՏ ԵՆ

Սկսած անցեալ տարվայ յունիս ամսից
մենք պարբերաբար հաղորդում էինք տե-
ղեկութիւններ այն նոր աշխարհի մասին, ու-
րիշ եւթարկվել էր չարաբաղդ Ախալքա-
լաքի գաւառը: Մենք առիթ ունեցանք
այցելել փնտրած տեղերը եւ համոզվեցինք,
որ միջատների արշաւանքը ամրացել է
գաւառի մի ընդարձակ տարածութիւն,
զրկելով օրական ապրուստից հազարաւոր
մարդկանց, որոնց թշուառ վիճակը այժմ
հասել է անտանելի դրութեան:
Թէ այն տեղեկութիւնները, որ մենք
հաղորդել ենք մեր ընթերցողներին, թէ

այն զեկուցումները, որ ներկայացրել է
տեղական իշխանութիւնը նահանգական
իշխանութեան, թէ այն հետազօտու-
թիւնները, որ կատարել են մասնագիտա-
կան ոյժերը, միաբերան հաստատում են,
որ Ախալքալաքի գաւառին հասած նոր ա-
ղէտը սարսափելի է եւ որ անհրաժեշտ է
կազմակերպել զօրազորացած ժողովրդին
օգնելու գործը կանոնաւոր հիմքերի վրա:
Երէկ, չորեքշաբթի, յունիսի 24-ին,
Թիֆլիսի նահանգապետի հրաւերով կայա-
ցաւ նահանգական վարչութեան ատեա-
նում մի ժողով, որի ընկնութեան առա-
կաներն էին Ախալքալաքի գաւառին հա-
սած աղէտի չափն ու աստիճանը եւ օգ-
նութեան միջոցների մշակումը:

Վնասված զիւղացիներին օգնելու հար-
ցը ներկայ գէպընում շատ դժուար լուծե-
լի հարցերից մէկն է: Ուրիշ տարիները,
երբ հարց էր ծագում օգնելու անբերրու-
թիւնից փնտրված երկրագործներին, աշ-
խատում էին ժողովրդին նպաստ տալ
եւ ապահովել մինչեւ նոր հունձի հասնելը:

Թէ նա ինչի է նման,—մի սեւ, երբեմն զանգ-
ուած, որ չը գիտես ինչպէս է շարժվում. իսկ
սօսիկից՝ նա մի գարմանալի հանելուկ էր, որ
ոչ ոք չէր փորձի լուծել—այդ արտաքինի տակ
թափվածը դող պատճառելու չափ խորհրդա-
ւոր էր: Նրա գէպը մարդկային պատկերի հե-
ռաւոր նմանութիւն միայն ունէր, եւ մարդ-
կային մի գէպը գրանցել աւելի չէր կարող
զրկված լինել որ եւ է արտայայտութիւնից,
չէր կարող մինչեւ այդ աստիճան պաղել, քա-
րանալ մի անորոշութեան մէջ, որ, չը գիտես
ինչու, մի անհասկանալի սարսուռ էր պատճա-
ռում. այդ դունտ՝ մահատետիլ կաշու տակ
կարծես այլ եւս կենդանի, շարժուն ներքի չէր
մնացել. այնտեղ ոչ ցաւ կար, ոչ գիտակցու-
թիւն. ոչ բողբոջ կար, ոչ աղբաւ. ոչ զայրոյթ
կար, ոչ ատելութիւն. այնտեղ իշխում էր մի-
այն սպանիչ անտարբերութիւն գէպի ամեն
ինչ եւ ամենքը, կամ, աւելի չուտ, այնտեղ
մնացել էր միայն գերագոյն ոչնչութիւնը, որ
մեծ ցաւի անխուսափելի վերջապահ է: Եթէ
հնարաւոր լինէր մի հզօր, զիւթական խօսքով
կենդանի մարդու մէջ ջնջել հոգեկան բոլոր
կարողութիւնները, նրա մտածելու ընդունա-
կութիւնը, գիտակցելու, զգալու յատկութիւնը,
եթէ կարելի լինէր խլել նրանից հոգին, թողնե-
լով կենդանի մարմինը, այն ժամանակ գոցէ
հնարաւոր լինէր մի այդպիսի գէպը ստանալ:

Նա նայում էր միայն մի աչքով. կարծես
ապակուց ձուլված մի հատիկ ըրել ուղղված էր
թէ ոչ, այդ դժուար էր ասել: Միւս աչքը
յոնքի ներքեւի խոռոչում ներկայացնում էր
մի սեւ կէտ. այնտեղ արտեւանումները, վե-
րից ու վարից իրար վրա հաւաքված, կրծի-
ված, կարծես անզուղ գիտմամբ կարված, քաշ-
կուղված, կազմում էին մի զգուշիկ հանդիմ-
անութիւն կախ ընկած բնիկներ եւ վարից ցլված
միտքը խառնված խառն ծածկում էին նրա
չրթունքներն ու բերանը. թոււում էր, թէ այդ
բերանը վաղուց է, ինչ ծնված է այդպէս,
ինչպէս իր դերը կատարած ու ցամաքած մի
հին ջրհոր, որ ծածկում են սալով: Նա չունչ
էր անում միայն քթածակներով, որոնք ան-
դադար լայնանում էին ու ննկանում, եւ դա
այդ գէպի կենդանութեան միակ նշանն էր:
Նա ոտքից դուրս սեւ էր հագնված. մի հին
ու սաստիկ տրորված սիւրբակի, ծաղկված ու
բծերով ծածկված, պատում էր նրա վրիտ ի-
րանը, թիկունքի վրա դժագրկով դուրս ցլված
թիակները, իսկ առջեւից՝ չորացած կրծքակեր
Աջ թիկն տակ նա կրում էր ինչ որ իր, փա-
թաթած հագար ու մի ցնցոտիների մէջ. եւ
ամեն անգամ, երբ այդ ալանդակ կապոցը
ծուլում էր, կամ քաշ ընկնում, նա ինքնաբո-
ւոյն չէր, տեղաւորում, պինդ սղծում էր
թիկն տակ եւ յարձնալ քայլում:

Արդեօք նա յոգնած էր, հիւանդ, թէ կապոցն
էր ծանր, այդ դժուար էր իմանալ, միայն նա
քայլում էր չափազանց դանդաղ եւ յուսահատ

Այնուհետեւ զիւղացին օգտվում էր իր նոր
հունձի արգելիքից եւ վերականգնում էր իր
տնտեսութիւնը: Ներկայ գէպընում հարցը
աւելի բարդանում է նրանով, որ զիւղա-
ցիները չեն վստահանում ցանել իրանց
դաշտերը, վախենալով, որ միջատները նո-
րից կուտեն, կը փչացնեն հացաբոյսերը:

Ինչպէս էլ վճռվելու լինի արտերի ցա-
նելու հարցը, այնուամենայնիւ մի բան մը-
նում է առանց կասկածի, որ այժմ, երբ
կարօտութիւնը մաշում է հազարաւոր ժո-
ղովրդի կենքը, անհրաժեշտ է հասարա-
կութեան անմիջական օգնութիւնը: Գիւ-
ղական աշխատող ձեռքեր աշխատանք են
որոնում՝ ապրուստի միջոց հայթհայթելու
համար: Բազմաթիւ անօգնականներ, որոնք
ծախել են իրանց տնային անասունները եւ
կամ կարանիքը, սպառում են, որ կարեկցու-
թիւնը օգնութեան դայ եւ կարողութիւն
տալ քաղցած ժողովրդին մի կերպ ձիգ
տալու իր կենքը մինչեւ աւելի լաւ օրեր:

Թող խօսէ հասարակական բարեգոր-
ծութիւնը եւ մի անգամ էլ ապացուցանէ,
որ նա գիտէ օգնել զօրազորացած երջօրը
նրա թշուառութեան եւ կարօտութեան
օրերում:

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒՆ

Յայտնի իրաւաբան եւ գրող Սպասովիչ ան-
ցախներում մի յօդուածի մէջ ապացուցանում
էր թէ փոքր ազգութիւնների համար մահվան
եւ կենքի խնդիր պիտի լինի ինքնուրոյն,
ազգային զրականութիւնը, մասնաւոր այն
վէպը, որի մէջ ազգային տարրին աւելի տեղ
է տուած, քան գեղարուեստին: Մի անհոտ ու
անհոգ, կատարելագոյն արուեստական զրակա-
նութիւն էլ մենք, հայերս, ունենք. դա արեւ-
մտեան հայերի զրականութիւնն է: Սակայն մի
մեծ թիւրիմացութիւն է, որ մենք այդ զրա-
կանութիւնը յատկացնում ենք արեւմտեան
ամբողջ հայութեան. աւելի ճիշդ եւ արդարացի
կը լինէր անուանել նրան Կ. Պոլսի զրակա-
նութիւն: «Մշակը» տասնեակ տարիներից ի
վեր ժամանակ էր անում, թէ որքան բացառա-
կան դեր է կատարում Կ. Պոլսի հայ գաղթա-
կանութիւնը բուն Հայաստանի վերաբերմամբ.
համարեա բոլոր հարցերում այդ գաղթական-
նութիւնը իրան էր համարում ամբողջ հայու-

թիւն, զոհում էր գաւառների չանքը իր տե-
ղական չանքին: Այդպէս էր եւ զրականու-
թեան մէջ. Իւրացնելով զրական մենաշնորհը,
Կ. Պոլսի հայութիւնը կատարեալ արհամար-
հանքի մասնեց գաւառները, իր ճշգնական
ճաշակների տեսակետից վերին աստիճանի վի-
րաւորական համարեց ոգեւորութեան աղբիւ-
րներ որոնել բուն ժողովրդի մէջ ու դրա փո-
խարէն ստրկացաւ ֆրանսիական վէպերին:
Կենդանի իրականութիւնից չինական պատե-
րով կտրված մի գաղութ, ինչպէս բնական էր,
պիտի ցամաքէր, ուժասպառ դանաւր. Եւ այդ-
պէս էլ եղաւ Կ. Պոլսի զրականութիւնը գնա-
լով դարձաւ վերացական, ընդհանրութեան տե-
սակետից անհասկանալի. սպառնում իր բոլոր
հիւթերը, նա ընկաւ լիզուային մի քառու մէջ,
արագ քայլերով դիմեց հին դարաբրին, պար-
ծեցաւ թէ մի նախանձնիկ հարստութիւն է:
Բայց այսօր ինչ ենք տեսնում—Քարացում
միայն: Վերջուպիս հարստութիւնը այն առ-
տիճանին է հասել, որ գաւառացիները չեն հաս-
կանում պոլսեցիներին, պոլսեցիները՝ գաւա-
ռացիներին:

Այս էջերում մենք չառ անգամ ենք արձա-
նագրել այն բարեբաղ դժգոհութիւնը, որ սկսել է
զուրկ բարձրացնել Կ. Պոլսի զրական մեռե-
լութեան մէջ. երեւան են գալիս անհատներ,
որոնք պահանջում են կենդանացնել զրակա-
նութիւնը, քանզի ժողովրդից բաժանող
չինական պատերը: Այս նոր հովերը մեզ հա-
մար այնքան թանկագին են, որ չենք կարող
ամեն անգամ կանգ չառնել բողբոջների, ինք-
նամոտակունների վրա, հաւատացած լինելով,
որ միայն դրանով կարելի է կենդանացնել Կ.
Պոլսի քարացած զրական մթնոլորտը: Մի
այդպիսի մտարկում եւ խիստ ձեւակերպված
պահանջ մենք գտնում ենք «Մարտի» վերջին
համարներից մէկում:

Պոլսահայ-թրքահայ զրականութիւնը այ-
սօր կը ներկայանայ բոլոր ինքնատիպ հան-
գամանքներէն զուրկ ու եթէ կողմէ, ան-
հարազատ ծնունդով ազնուականի տեսակ
մը այն ճաղած ու փչացած զաւակի երեւոյ-
թով՝ որ իր բոլոր արուեստական պերճան-
քին ու արդուարդին մէջ ալ յարգանքի
քիչ մը արժանաւորութիւն չի կրնար պա-
հնել վրանս Ամիոփիցէք տաշեցիներու, տախ-
տակներու այդ ամբողջութիւնը՝ որուն զրա-
կանութիւն անուրը կուտանք՝ ու պիտի
տեսնէք թէ անոնք բանի մը չը պիտի ծա-
ռայեն օրին մէկը. խորհեցէք ապագայի այն
մարդուն վրա, որ մեր ժամանակակից զրա-
կանութիւնը պիտի ուսուցանարէ. խորհե-
ցէք, ինչ անանգամ պիտի ըլլանք անոր, որ-

ջանքերով. նախ ձգում էր մի ոտքը, ապա
մեղմով տեսից քաշ էր տալիս միւսը եւ երբ
այսպիսով երկուսն էլ հաւասարվում էին, նա
կրկին մի ոտքն առաջ էր դրում, կրկին քա-
շում ետեւից միւսը եւ այսպէս անվերջ: Եւ
ամեն մի այսպիսի քայլ անելիս, նրա պարա-
նոցը եւ իրանի առաջին մասը երկարանում,
ձգվում էին, թիակի ոսկորները դուրս էին
ցլվում մի ցաւոտ շարժումով, ինչպէս ճանք
ապլին լծված մի հիւժկած, ուժասպառ կենդա-
նի: Այդ ժամանակ թոււում էր, թէ մարդը հա-
զիւ է քաշում իր ցաւերի բեռը, եւ այդ բե-
ռի ծանրութիւնից է, որ նրա ոսկորտ մէջքն
այնպէս կծկվում ու բացվում է:

Ո՞ր է դնում նա:

Ո՞վ գիտէ:
Ո՞ր է քշվում քամու չնով՝ երկնքի անհու-
նութեան մէջ խաղացող մի թեթեւ ծղոտ. ո՞վ
կարող է ասել, թէ ո՞ր կանգ կանգնի գետի
յորձանքով տարվող մի փետուր. երբ այրող
ցաւն է խթան, ո՞ր կանգ կուտն տանջված
մարդը. խոցված այծեմաք իր վերքի ցաւից
հրքան հեռու կը փախչի:

Մարդը գնում էր... հրքան թշուառ էր նա:

Կարծես թէ մեծ քաղաքի արտաքին խառու-
սիկ փայլի տակ թափված, նրա մոռյլ նկուղ-
ներում, խոնաւ գետնափորներում, լուռ գի-
չերների խաւարի մէջ սողացող շարիքի՝ ծալ-
րագոյն չափն էր բաժին ընկել այդ զարմանա-
լի վատաբաղդին եւ կարծես թէ նա կրում էր

